ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- դեկտեմբերի 2021 թվականի № Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի №9Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՄՈԴՈՒԼ-ՍԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի դեկտեմբերի 3-ի գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով 44 օրով երկարաձգել Հանձնաժողովի 2019 թվականի հունվարի 23-ի №9Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Մեծ Մասրիկ» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0635 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ №0635 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը: Ընկերությունը հայտնել է, որ Կայանի կառուցումը ԼԷ №0635 լիցենզիայով սահմանված ժամկետում հնարավոր չի եղել ավարտել, 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի կողմից Արցախի Հանրապետության ուղղությամբ սկսված ռազմական գործողությունների պատճառով: Մասնավորապես, 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 9-ը Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի կողմից ձեռնարկված ռազմական գործողությունների ժամանակ խաթարվել են կապալառու կազմակերպությունների աշխատանքները, քանի որ այդ կազմակերպություններին պատկանող շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցները բանակի կարիքների համար տրամադրելու հետևանքով կասեցվել են Կայանի կառուցման աշխատանքները: Կայանի կառուցման

աշխատանքներին էապես խոչընդոտել է նաև շինարարություն իրականացնող կազմակերպության մի շարք աշխատակիցների զորակոչման հանգամանքը, և նշվածի պատճառով հիմնականում դադարեցվել են նաև նյութերի և ապրանքների մատակարարումը: Ընկերությունը նշել է նաև, որ թվարկված հանգամանքներն ունեն արտակարգ և անկանխելի բնույթ և դուրս են Ընկերության վերահսկողությունից: Ելնելով նշվածից՝ Ընկերությունը խնդրել է ԼԷ №0635 լիցենզիայի պայմանների չկատարումը համարել ֆորս մաժորի հետևանք և ընկերության ներկայացրած երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չփոխանցել,

բ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի՝

- 7-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե որոշում է ընդունել արտադրության լիցենզիայով սահմանված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգելու մասին,
- 10-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը Կարգով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի,

գ) Հանձնաժողովը, ուսումնասիրելով առկա փաստական հանգամանքները, գտնում է, որ ԼԷ №0635 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը ենթակա է երկարաձգման ընկերության կողմից հայցվող 44 օր ժամկետով, իսկ Ընկերության ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը ենթակա չէ փոխանցման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, քանի որ Ընկերության կողմից ԼԷ №0635 լիցենզիայի պայմանների չկատարումը հետևանք է ֆորս մաժորի: Մասնավորապես, Կայանի կառուցման աշխատանքները սահմանված ժամկետում ավարտելուն խոչընդոտել են 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 9-ը Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի կողմից ձեռնարկված ռազմական

գործողությունները, դրանցով պայմանավորված կապալառու կազմակերպություններին պատկանող շինարարական տեխնիկայի, տրանսպորտային միջոցների զինված ուժերի կարիքների համար հանձնման և Կայանի շինարարության աշխատանքներին ներգրավված մի շարք աշխատակիցների զորակոչման հանգամանքները, որոնք որևէ կերպ չէին կարող գտնվել Ընկերության վերահսկողության ներքո կամ կանխվել վերջինիս կողմից, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Կարգը, այդ թվում՝ Կարգի 78-րդ կետը, Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 10-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Քառասունչորս օրով երկարաձգել Հանձնաժողովի 2019 թվականի հունվարի 23-ի «ՄՈԴՈՒԼ-ՍԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Մեծ Մասրիկ» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №9Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված Կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0635 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը՝ ճշգրտելով նաև արտադրության ժամանակահատվածը՝ որոշման մեջ «մինչև 2022 թվականի հունվարի 15-ը» բառերը փոխարինելով «մինչև 2022 թվականի փետրվարի 28-ը» բառերով, իսկ «մինչև 2040 թվականի նոյեմբերի 15-ը» բառերը՝ «մինչև 2040 թվականի դեկտեմբերի 29-ը» բառերով:
2. Ընկերությանը՝ Կայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում, Հանձնաժողով ներկայացնել 7 500 000 (յոթ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2022 թվականի ապրիլի 14-ը գործողության ժամկետով:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 15-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- դեկտեմբերի 2021թ.